ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ՄԱՐԻԱՆՆԱ ԱՊՐԵՍՅԱՆ

ՀԱԼԱՎՕՐՀՆԵՔԻ ԾԵՍԸ ՊՈՆՏՈՍԻ ՀՈՒՅՆԵՐԻ ՄԵՋ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

Հալավ օրհնեքի ծեսը[1] հայ իրականության մեջ շատ հին արմատներ ունի եւ որպես կանոն ամրագրված է Հայ Եկեղեցու ծիսարան Մաշտոցում՝ «Կանոն հանդերձ օրհնելոյ» վերտառությամբ[2]:

Որպես սկիզբ, փորձենք մեջբերել սույն կանոնը, որից հետո կպարզենք, թե այն ինչ կապ ունի Պոնտոսի հույների հարսանեկան ծեսերում:

«Նախ քան զամենայն բերեն զհալաւն առաջի քահանային, եւ քահանան խունկ արկանէ եւ ասէ. «Այսօր երկնայինք ուրախացան ընդ երկնաւորացս նորոգումն....»: Եւ ասէ զաղօթս. «Օրհնեա, Քրիստոս Աստուած մեր՝ հոգեւոր օրհնութեամբ զհալաւս զայս հարսանեաց. զի որք զգեցցին զսա՛, մի՛ իշխեսցէ մերձենալ ի նոսա չար աղանդ դիւաց կամ կախարդաց: Այլ ամրացեալ զօրութեամբ սուրբ խաչի քո, փրկեսցեն յամենայն որոգայթից սատանայի: Եւ քեզ վայել է փառք»[3]: Այնուհետեւ նույն տեղում կարդում ենք հետեւյալ տողերը. «Եւ ապա երթան ի տուն հարսին, եւ բերեն զհարսն առ փեսայն. եւ առնու քահանայն զաջ ձեռն հարսին, եւ տայ յաջ ձեռն փեսային եւ ասէ....»:

Դատելով մեջբերումից՝Հալավօրհնեքի ծեսը տեղի է ունենում հարսի եւ փեսացուի տանը, եւ ոչ թե եկեղեցում: Այս առիթով հարկ ենք համարում հիշել նաեւ Մաղաքիա արք. Օրմանյանի 1901թ. Կ. Պոլսում հրապարակած 14 հոդվածից բաղկացած կոնդակը[4], որում նա կանոնակարգել է ամուսնության ծեսի ժամանակ կատարվող բոլոր արարողությունները՝ նշանադրությունից մինչեւ թագվերաց: Ի թիվս այս ծիսական արարողությունների, կոնդակի Է հոդվածում նա անդրադառնում է հալավօրհնեքի ծեսին՝ այն որակելով որպես բարեպաշտական արարողություն: Համաձայն պատրիարքի՝ հալավի օրհնությունը պսակից մեկ օր առաջ պետք է կատարի յուրաքանչյուր կողմի տան ծխատեր քահանան, այնուհետեւ հավելում է. « ... իսկապէս փեսացուին եւ հարսնացուին հարսանեկան զգեստը օրհնելով՝ հագնելէն առաջ, եւ ոչ թէ լոկ գլխանոց մը կամ թէ կեղծ ծաղկի կտոր մը, որ բարեպաշտական նշանակութենէ աւելի ծաղրելի հանգամանք մը կը զգենու»: Հալավի օրհնությունը եկեղեցում կատարվելիք արարողություն չէ:

Դատելով Մաշտոցում առկա այս կանոնի բովանդակությունից՝կարելի է ենթադրել, որ հարսանյաց հանդերձն օրհնելը քահանայի ծիսական պարտականությունն էր: Նա վերցնե-

---

1 Ցավոք, 1973 թվականից Երուսաղեմում եւ Անթիլիասում տպված Մաշտոցներից հալավօրհնեքի ծեսը դուրս է հանվել: Այն բացակայում է նաեւ Ոսկան Երեւանցու 1667թ. հրատարակած Մաշտոցում: - Տե՛ս **Տ. Տաթեւ վրդ. Հակոբյան**, «Մաշտոցի»՝Ոսկան Երեւանցու հրատարակությունը. «Էջմիածին», 2010, Ե, էջ 45:

2 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր թ. 953, էջ 197ա - 202բ:

3 «Մաշտոց», Էջմիածին, 1836, էջ 50-53:

4 «Դասակարգութիւնները», Դատրիարքական կոնդակ, «Արեւելք», Կ. Պոլիս, 1901, թ. 4767, 4768, ԺԸ տարի: Տե՛ս նաեւ մեր հրապարակումը. **Մարիաննա Ապրեսյան,** Պսակի ժողովրդական եղծումները Կ. Պոլսի պատրիարքության մեջ. «Էջմիածին», 2010, Է, էջ 91 - 98:

լով խաչն ու Մաշտոցը, գնում էր փեսայի, ապա հարսի տուն՝ հանդերձն օրհնելու: Ծիսագրքում առկա այս տողերից՝ «... զի որք զգեցցին զսա՛, մի՛ իշխեսցէ մերձենալ ի նոսա չար աղանդ դիւաց կամ կախարդաց: Այլ ամրացեալ զօրութեամբ սուրբ խաչի քո, փրկեսցեն յամենայն որոգայթից սատանայի», - ասում է, որ այս ծեսի հանդեպ ժողովրդի առանձնահատուկ ուշադրությունը բացատրվում է նրա գիտակցության մեջ ամուր նստած երևելի եւ աներևույթ չար ուժերի հավատալիքի մասին դեռևս հեթանոսական հավատալիքից: Հեթանոս հայերը, ըստ երևույթին, հատուկ ծեսերով ցանկացել են հարսանյաց հանդերձը վնասազերծել կախարդական եւ սատանայական ուժերից, որոնք, իբրեւ թե, մտնելով այդ հանդերձի մեջ, անուղղելի մարմնական վնաս էին պատճառում հարսին ու փեսային[5]: Թեեւ չպետք է անտեսել նաեւ նոր կյանքն օրհնված զգեստով սկսելու քրիստոնեական միտումը: Հին Եկեղեցում նույնպես առկա էր զգեստի օրհնություն Սուրբ Մկրտության առիթով:

Վերլուծելով ազգագրական գրականության մեջ եղած այս թեմայի վերաբերյալ նյութերը՝ տեսնում ենք, որ հալավօրհնեքի ծեսի զեղծումներն ավելի շատ հանդիպում են Կ. Պոլսի պատրիարքության տարածքում, որոնք պատճառ են հանդիսացել Մաղաքիա արք. Օրմանյանի կոնդակի հրապարակմանը: Եթե համեմատական կարգով նույն ծիսական արարողությունը փնտրենք Արեւելյան Հայաստանի թեկուզ երեք պատմա-ազգագրական շրջանում, ինչպես օրինակ Գանձակում, Սիսիանում եւ Զանգեզուրում, ապա կտեսնենք հետեւյալը. «Նույն շաբաթ օրը երեկոյան քահանան հրավիրվում է թագվորի տուն՝ այս հանդերձը, որ ***թեթեթ*** է կոչվում, օրհնելու: ... Այս բոլորը մի սկուտեղի մեջ դնում են տան օջախի մոտ, թագվորի հայրը վերցնում է գլխարկը եւ դնում ***թեթեթի*** վրա, թագվորը եւ խաչեղբայրը մի-մի մոմ ձեռքներին՝ կանգնում են ***թեթեթի*** մոտ: Քահանան օրհնում է ***թեթեթը*** եւ Ավետարանը դնելով նրա վրա, բոլորին հրավիրում է խաչհամբույր ձգելու»[6]:

Կամ. «Ուրբաթ օրը երեկոյան ժամերգությունից հետո քահանան փեսացուի բարեկամների հետ գալիս է աղջայի տուն: Այստեղ հարսի հանդերձը, որ ***թեթեթ*** է կոչվում, մի սկուտեղի վրա դրած առաջ են բերում: ... Երբ սկուտեղը դնում են քահանայի առաջ, թագվորը վերցնում է իր գլխարկը եւ դնում վրան, քավորն էլ իր թուրը պատյանով երկարացնում է գդակի կողքին: Ապա թագվորը, քավորը եւ փեսաղբերը չոքում են սկուտեղի առաջ եւ այսպես սպասում, մինչեւ որ քահանան օրհնում է հանդերձը»[7]:

Զանգեզուրում հալավօրհնեքի՝ ***թեթեթօրհնանքի***, վերաբերյալ կարդում ենք. «Շաբաթ առավոտ մակարները նորից խմբվում են հարսնացուի տանը: Քահանան օրհնում է թագվորի տնից բերված ***թեթեթը***, որի առաջ կանգնած է լինում թագվորն իր քավորով ու փեսաղբերով: ***Թեթեթի*** վրա դնում են նաեւ հարսնացուի հոր կողմից թագվորին ընծայելու գոտին ու գլխարկը: Երբ օրհնությունն ավարտվում է, քահանան խաչհամբույր է հավաքում»[8]:

Ինչ վերաբերում է Կ. Պոլսի պատրիարքությանը ենթակա շրջաններին, ապա այստեղ այն տեղի էր ունենում թե՛ փեսացուի տանը, թե՛ եկեղեցում: Օրինակ Եղոկիայում եւս գրեթե

5 Տե՛ս **Ս. Ն. Հովհաննիսյան**, Ամուսնա-ընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում IV – IX դդ., Եր., 1976, էջ 167:

6 **Ե. Լալայեան**, Գանձակի գաւառ. Ընտանեկան բարք. «Ազգագրական հանդէս», Զ գիրք, Թիֆլիս, 1900, էջ 253:

7 **Ե. Լալայեան**, Սիսիան, Ընտանեկան բարք. «Ազգագրական հանդէս», Գ գիրք, Թիֆլիս, 1898 - թ. 1, էջ 219:

8 **Ե. Լալայեան**, Զանգեզուր, Ընտանեկան բարք. «Ազգագրական հանդէս», Գ գիրք, Թիֆլիս, 1898, թ. 2, էջ 77 - 78:

ամենուր կատարվել է տանը՝ ծխատեր քահանայի կողմից. «Գիշերուան առաջին ժամերուն, ձայնաւոր տղայք մոմեր ի ձեռին սենեակէն ներս կը մտնէին իրենց հետ ունենալով փեսին հագուստներն (վերարկուն եւ ֆէսը): Քահանայք զգեստաւորուելով հալաֆ կ՚օրհնէին, ապա երգեցիկ մանկունք սենեակէն դուրս ելնելով, կ՚երթային փեսան բերել շարականներով: Փեսան ուղղակի կ՚երթայ համբուրել վարդապետին կամ քահանային ձեռքն, որն այս առթիւ կ՚ըսէր պահպանիչ մը»[9]:

Նույն կարգը հանդիպում ենք նաեւ Գամիրքում. «Գամիրքի հայերի մեջ ընդունված էր, որ փեսան լոգանքից հետո, իր ներքնահագուստը եւ էնթարին հագած, առաջնորդվում էր այն սենյակը, ուր քահանան պետք է օրհներ «թագավորական հալավը»: Քահանան օրհնում էր փեսայի սալթան (հերմանեն), գլխարկը եւ քավորի սուրը, որոշ վայրերում նաեւ հարսի հալավը»[10]:

Սակայն Համշենում պսակի օրվա առավոտյան փեսայի տերը հարսի հալավներն ու մատանին ուղարկում է եկեղեցի օրհնելու՝ քահանային ուղարկելով խաշած հավ, խմորեղեն, ձվածեղ, «խաչ - գաթա» եւ «մի շտոպ գինի»[11]:

Հալավօրհնեքի՝ եկեղեցում կատարվելու մասին է խոսում նաեւ «Բյուրակն» պարբերականի մի հոդված, որը վերաբերում է Նիկոմիդիայում գտնվող Օվաճըգի հայերին. «Եթե նույն օրը մի քանի հարսանիքներ են լինում, զանգակով եկեղեցի են հրավիրում, քանի որ հալավի օրհնությունն այնտեղ է կատարվում»[12]:

Բավական ուշագրավ են այս թեմայով «Արեւելք» պարբերականում մեզ հանդիպած անանուն մի ճանապարհորդի ուղեգրական նոթերը. նա այցելել է Կէմլէյիկ ծովափնյա գյուղաքաղաքը: Այստեղի բնակչության մեծ մասը հույներ են, իսկ հայերը շուրջ 25-30 տուն են: Այստեղից փոքր-ինչ վեր՝ Վերին Պէնլի գյուղ բարձրանալիս, նա ականատես է եղել միաժամանակ տեղի ունեցող քսան հարսանիքի: Հարսանիքը համառոտ նկարագրելու ժամանակ նա նշում է. «Հանդիսաւորութեամբ հարսի կողմից փեսու համար պատրաստուած զգեստները տանում են փեսու տուն, իսկ փեսու կողմից հարսի համար պատրաստուածները՝ հարսի տուն: Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ հալաւի օրհնութիւնը կատարւում է եկեղեցու մէջ, ոմանք էլ տանն օրհնել կտան: Օրհնութիւնից առաջ քահանան բարձրաձայն ասում է, որ բոլորն ասեն «Շնորհաւոր լինի»: Օրհնութիւնից յետոյ նոյն մաղթանքները կանեն»[13]:

Ներկայացնելով սույն ծեսի վերաբերյալ հայկական նյութը՝ փորձենք անդրադառնալ այս թեմայի շուրջ եղած հունական նյութին: Նախ հարկ ենք համարում նշել, որ Պոնտոսի հույների մեջ գոյություն ունեցած այս ծեսը բոլորովին անծանոթ է Հունաստանի հույներին: Ավելին, Հունաստանի Սալոնիկ քաղաքում այս առիթով փնտրեցինք հունական ծիսագիրքը՝ ΕΥΧΟΛΟΓΙΟΝ ΤΟ ΜΕΓΑ[14] («Ծիսարան Մեծ»՝ Մաշտոց ընկալմամբ) եւ այնտեղ հայտնաբերեցինք, որ հունական ծիսագրքում նման կանոն ընդհանրապես գոյություն

9 Տե՛ս **Արշակ Ալպոյաճեան,** Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Կահիրէ, 1952, էջ 1504:

10 Տե՛ս **Վ. Մ. Թեմուրճյան,** Գամիրքի հայերը. «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն», Ա, Եր., 1970, էջ 120:

11 Տե՛ս **Ե. Լալայեան,** Համշենցի հայեր. «Ազգագրական հանդէս», Դ գիրք, Թիֆլիս, 1898, թ. 2, էջ 138:

12 Տե՛ս **Յ. Էսկեան,** Հարսանեկան սովորութիւններ ու երգեր Օվաճըգի (Իզմիրի) մէջ. «Բիւրակն», ԺԶ տարի, թ. 25, Կ. Պոլիս, էջ 540:

13 «Ճամբու նօթեր». «Արեւելք», Կ. Պոլիս, 1901, թ. 4796:

14 **Νικολάου Παν. Παπαδόπουλου**, Ευχολόγιον το Μέγα, ἐν Ἀθηναῖς, 1927 (**Նիկոլաու Պան. Պապադոպուլու**, Ծիսարան Մեծ, Աթենք, 1927):

չունի: Սրանից զատ, այս թեմայի շուրջ ուսումնասիրության ժամանակ գտանք «Բարքերի եւ ավանդույթների մասին» (Κανονισμός περὶ ηθών και εθίμων)[15] վերտառությամբ մի կանոնադրություն՝ հրապարակված 1897թ. սեպտեմբերի 10-ին Կապադովկիայի Ջիլե քաղաքում[16]: Ամուսնաբնտանեկան ծիսաշարին վերաբերող 182 հոդվածներից բաղկացած այս կանոնադրությունը, Օրմանյանի վերոհիշյալ կոնդակի պես, կանոնակարգում է նաեւ նշանադրությունից պսակադրություն ծեսերը: Ուշադիր քննելով այս կանոնադրությունը՝ հալավ օրհնեքի ծեսի վերաբերյալ որեւէ հոդված չգտանք:

Այնուամենայնիվ, Պոնտոսի հույների ավանդական հարսանյաց ծեսերն ուսումնասիրելիս գրեթե ամենուր հանդիպում ենք հալավ օրհնեքի ծեսին, որը, ինչպես հայերի մեջ, տեղի էր ունենում թե՛ տանը, թե՛ եկեղեցում: Այս ծեսի հույների մեջ եւս տարբեր կերպ տեղի ունենալու պատճառով ցանկալի ենք համարում որոշ շրջանների մասին առաձին-առանձին նշել:

Ըստ ավանդույթի, երբ փեսան քավորի եւ հարսնառի խմբի հետ մտնում է հարսի տուն, ***խեյրեթչին***՝ հարսի սինին պարեցնողն ու տանողը, ներս է մտնում եւ այն դնում սեղանին: Հարսի սինին պարունակում էր հարսի հարսանեկան զգեստը՝ վրան դրված հարսի ավանդական գաթան: Այդ ժամանակ մոտենում է քահանան, օրհնում հարսի հալավը եւ գաթան, որից հետո օրհնված հարսանեկան զգեստն ուղարկում են հարսի սենյակը՝ հագցնելու, իսկ գաթան կիսում են երկու մասի, որից մի մասը տալիս են հարսի ծնողներին, իսկ մյուս մասը հարսին հագցնելուց հետո մաս-մաս են անում եւ բաժանում երիտասարդներին[17]:

Տրապիզոն նահանգի հարավային մասում գտնվող Սուրմենա բնակավայրում հարսանիքից մեկ օր առաջ խաչեղբայրը հարսի եւ փեսայի հարսանեկան զգեստները, բացի փեսայի ֆեսից, տանում է եկեղեցի, որպեսզի քահանան օրհնի[18]:

Նույն նահանգի մաս կազմող Արգիրոպոլիս քաղաքում[19] (Գյումուշհանե[20]) եւ նրա

15 **Κων/νος Μ. Νίγδελης**, Καππαδοκία, Δρώμενα γάμου, Θεσσαλονίκη, 2008, էջ 69 - 87 (**Կոնստանդինոս Մ. Նիգդելիս,** Կապադովկիա, Հարսանեկան ծիսակարգը, Թեսաղոնիկե, 2008, էջ 69-87):

16 Ջիլե քաղաքի մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում Գարեգին Սրվանձտյանցը, ըստ որի «Այս քաղաքի մեջ կը բնակին միայն Հայք եւ Թուրք, Հույնք եղեր են հառաջ, իսկ այժմ քանի մը վաճառական եւ եթ կը գտնվին երթ եւ եկ. Հունաց մեկ եկեղեցի կա առանց քահանայի, թեպետ ի հնումն եպիկոպոսանիստ է եղած...» - **Գ. Սրվանձտյանց,** Թորոս Աղբար. Երկեր, 2, Եր., 1982, էջ 220:

17 **Γεωργιάδης Θανάσης**, Ο Πόντος, τόμος 2, Θεσσαλονίκη, 1994, էջ 564 (**Գեորգիադիս Թանասիս**, Պոնտոսը, 2, Թեսաղոնիկե, 1994, էջ 564), **Ν. Λαπαριδη**, Το Νυφέπαρμαν, Αρχείον Ποντού, τόμος 38, Αθήνα, 1984, էջ 212 (**Ն. Լապարիդի**, Հարսնառը, Դիվան Պոնտոսի, 38, Աթենք, 1984, էջ 212):

18 **Α. Η. Οικονομίδης**, Γαμηλία έθιμα, Αρχείον Ποντού, τόμος 1, Αθήνα, 1928, էջ 151 (**Դ. Ի. Իկոնոմիդիս**, Հարսանեկան ավանդույթներ, Դիվան Պոնտոսի, 1, Աթենք, 1928, էջ 151):

19 Արգիրոպոլիս քաղաքը ոչ միայն վարչական, այլեւ Խալդիայի եւ Խերրիանայի պատրիարքական նստավայր էր: Այն իր շրջակայքով հնուց ի վեր աչքի է ընկել թանկարժեք մետաղի հարուստ հանքերով: Այդ իսկ պատճառով թուրքերն անմիջապես քաղաքի եւ տեղի բնակչության հարստության եւ բարեկեցության բանալին գտնելով՝ իրենց ձեռքն են վերցնում հանքերն ու հռոմեական շինությունները: Այս հափշտակությանը հետեւում են տեղի բնակչության առանց լուրջ պատճառի հալածանքներն ու գլխատումները: Հայտնվելով անհուսալի իրավիճակում, մինչ 1828թ. ռուս-թուրքական պատերազմի սկիզբը, Արգիրուպոլսի եւ Էրզրումի շրջանի հույն տեղաբնիկները գաղթում են ավելի ապահով շրջաններ՝ Ռուսաստան եւ նրա կազմի մեջ մտած Վրաստան, Հայաստան: Այսպիսով, Արգիրուպոլի կամ Կյումուշխանեի հույն բնակչությունը, որոնց զգալի մասը հանքագործներ ու մետաղագործներ էին, սկսում է նվազել 7000 տնից հասնելով շուրջ 250 տան: - **Φροσώ Μπαλτατζή-Σταματιού**, Ιστορική ανάδρομη στις ρίζες, Θεσσαλονίκη, 1997, էջ 65 (**Ֆրոսո Բալտաջի - Ստամատիու,** Պատմական անդրադարձ արմատներին, Թեսաղոնիկե, 1997, էջ 65):

20 Կյումուշխանեում կար 1600 տուն, որից 200-ից ավելին հայերին էին պատկանում: Ունեին նաեւ Սուրբ

շրջակա գյուղերում փեսային հագցնում ու զարդարում էին միայն եկեղեցու իկոնոստասի առջև հարսանեկան հանդերձն օրհնելուց հետո[21]:

Մացուկա[22] նահանգի հույների մոտ հալավօրհնեքի ծեսը տեղի էր ունենում փեսայի տանը: Հարսանիքից մեկ օր առաջ, փեսային հանդիսավոր լողացնելուց հետո, քահանային տուն են հրավիրում՝ հարսի եւ փեսայի հարսանեկան զգեստներն օրհնելու: Այս արարողությունից հետո անուշեղենով ու խմիչքով հյուրասիրում են քահանային եւ բոլոր ներկա գտնվողներին[23]:

Կապադովկիայի շրջանում թե՛ հարսի, թե՛ փեսայի (ֆեսը, վերնաշապիկը, կոշիկները) հարսանեկան զգեստները քահանան օրհնում էր մինչեւ նրանց տները տանելը: Որոշ բնակավայրերում հարսանեկան զգեստների օրհնությունը տեղի էր ունենում նաեւ եկեղեցում, որի դեպքում հարսանիքից մեկ օր առաջ նորապսակների հագուստները դնում էին սկուտեղի մեջ եւ տանում եկեղեցի[24]:

Ֆարասայում հարսանիքի նախօրեին փեսան իր ընկերների եւ երաժիշտների ուրախ նվագի ներքո հատուկ այցելությամբ գնում է քահանայի հետեւից եւ նրան ուղեկցում իրենց տուն՝ հարսանեկան զգեստներն օրհնելու: Տան բոլոր անդամները վառվող մոմերով շրջապատում են քահանային, որը նախ օրհնում է հարսի, ապա փեսայի զգեստները[25]:

Ամփոփելով հայերի եւ Պոնտոսի հույների մեջ հալավօրհնեքի վերաբերյալ նյութերը՝ անվերապահորեն կարելի է ասել, որ այս ծիսական արարողությունը հույների մոտ մշակութային փոխառություն է: Երկու ժողովուրդներ դարեր շարունակ ապրելով կողք - կողքի, այնուհետեւ ճակատագրի բերումով հայտնվելով մահմեդական միջավայրում՝ իրենց հարաբերություններն ավելի են սերտացրել քրիստոնեական հավատի եւ սրբազան ավանդույթների պահպանման համար: Ուստի այս պարագայում Պոնտոսի հույների մեջ զուտ լոկալ բնույթ կրող հալավօրհնության ծեսի կիրառումը ոչ այլ ինչ է, քան հայկական միջավայրի հետ սերտ հարաբերությունների հետեւանքով առաջացած փոխառություն:

Աստվածամայր եկեղեցին: - Տե՛ս **Միհաս Բժշկեան,** Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 90: - ... Բնակիչք երեք ազգի են՝ թուրք, հայ եւ հույն, առողջ, կայտառ եւ սիրուն են: - **Գ. Սրվանձտյանց,** նշվ. աշխ., էջ 341:

21 Տե՛ս անդ, էջ 152:

22 Մացուկա – Իր տեսակով լեռնային այս բարձրավանդակը համարվում է Տրապիզոնի մարզի մի նահանգը, որը բաղկացած է եղել 70 գյուղերից: Այս գյուղերից 11-ը պատկանել են Վերին Մացուկային, 59-ը՝ Ներքին Մացուկային, որի գյուղերից երկուսը՝ դատելով նրանց հայկական անուններից (Αρμενού -Արմենի կամ Հայի, Πογότς - Փողոց), պետք է հայկական լինեն - Տե՛ս **Παναγιώτης Δ. Μεντεσίδης,** Ο Γάμος στη Ματσούκα του Πόντου, Αθήνα, 20 07, էջ 14 – 15 (**Պանայոտիս Դ. Մենտեսիդիս,** Հարսանիքը Պոնտոսի Մացուկայում, Աթենք, 2007, էջ 14 -15):

23 Տե՛ս **Παναγιώτης Δ. Μεντεσίδης,** նշվ. աշխ. էջ 45:

24 Տե՛ս **Κων/νος Μ. Νίγδελης,** նշվ. աշխ., էջ 43:

25 Ֆարասան Կապադովկիայի խորքում գտնվող փիպիկ հունական քաղաք է, որը սկզբում եղել է մենէթենիկ, սակայն հետագայում թուրքական տարրի այնտեղ հաստատվելուց հետո, մինչեւ հույների վերջնական տեղահանությունը երկար տարիներ ապրել են թուրքերի հետ միասին: - Տե՛ս **Λάζαρος Μ. Κελεκίδης,** Τα Φαρ ασά της Καππαδοκίας, Θεσσαλονίκη, 2005, էջ 121 (**Լազարոս Մ. Կելեկիդիս,** Կապադովկյան Ֆարասան, Թեսաղոնիկե, 2005, էջ 121):